

16387



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիդյան



« 30 » 12 2022թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 02 02 - 22

Ձեռնարկողը՝

«ՄԵՐԻ-ՖԻՇ» ՍՊԸ

Արարաբի մարզ, Մարմարաշեն համայնք, Երևան-Մեղի մայրուղի 14/1

ործունեությունը՝ Մարմարաշեն գյուղի Երևան-Մեղրի մայրուղու 14 հասցեում գործող ձկնաբուծարանի վերակառուցման/ընդլայնման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Արարաբի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող



Խաչիկ Մարտիրոսյան

Առդիր՝ 6 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 02 02 - 22
<30> 12 2022թ.

Արարատի մարզի Մարմարաշեն համայնքի Երևան-Մեղրի մայրուղի 14 հասցեում ձկնաբուծարանի վերակառուցման/ընդլայնման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայր

Ձեռնարկող՝ «ՄԵՐԻ ՖԻՇ» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝ Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման նախնական գնահատման հայր
Գործունեության կատեգորիան՝ «Գ»
Տեղադրման վայրը՝ Արարատի մարզ, Մասիս համայնք բն. Մարմարաշեն

Ներածական մաս: Արարատի մարզի Մարմարաշեն համայնքի Երևան-Մեղրի մայրուղի 14 հասցեում ձկնաբուծարանի կառուցման/ընդլայնման նախատեսվող գործունեությունը համաձայն Օրենքի 16-րդ հոդվածի 6-րդ մասի 4)-րդ կետի ա. ենթակետի ձկնաբուծական տնտեսություններ՝ տարեկան 100 տոննա և ավելի դասակարգվում է որպես «Գ» կատեգորիայի գործունեության տեսակ:
«ՄԵՐԻ ՖԻՇ» ՍՊ ընկերությունը /այսուհետ՝ Ընկերություն/ Արարատի մարզի Մարմարաշեն համայնքի Երևան-Մեղրի մայրուղու 14/1 և 14/2 հասցեներում ներկայումս իրականացնում է ձկնաբուծական գործունեություն: Ընկերության սեփականատեր մտադիր է ընդլայնել գործունեությունը և ընկերության գործունեության հարակից տարածքում, Մարմարաշեն համայնքի Երևան Մեղրի մայրուղի 14 հասցեում գտնվող հողամասում /որը զբաղեցնում է 2.7925 հա տարածք/, նախատեսում է լրացուցիչ կառուցել 41 հատ ձկնաբուծական լճակներ: Ընդհանուր լճակների թիվը ընդլայնումից հետո կհասցվի 137-ի: Լճակների գումարային մակերեսը՝ 56882.3 քմ է, որից՝ 40206.3 քմ-ը գոյություն ունեցող լճակների մակերեսն է իսկ 16676 քմ-ը՝ ավելացվող:

Ընդլայնումից հետո ձկնաբուծարանի տարեկան արտադրական հզորությունը կկազմի մոտ 865տ: Ընկերությունը հիմնականում զբաղվում է ծիածանափայլ իշխանի (Parasalmo mikissa) և ստերլետ (Acipenser ruthenus) ձկնատեսակների աճեցմամբ:

Նախատեսվող գործունեության նախագծման աշխատանքների համար հիմք է հանդիսացել Մարմարաշեն համայնքի ղեկավարի կողմից 2022թ.-ի հոկտեմբերի 20-ին տրված նախագծման թույլտվությունը:

Ընկերության ջրօգտագործումը ներկայումս իրականացվում է 02.02.2021թ. տրված թիվ 007 Զրօգտագործման թույլտվության պայմաններին համապատասխան՝ 6 խորքային հորերից, 55961.3 խմ/օր /կամ 650.0լ/վրկ ծախսով/: Լճակներում ջուրը շրջանառվելուց հետո նույն չափաքանակով հեռացվում է Հրազդան գետ:

Նկարագրական մաս. Գործունեության տարածքը գտնվում է Երևան - Մեղրի ավտոմայրուղու հարևանությամբ, շրջապատված է գյուղատնտեսական հողերով: Ձկնաբուծարանի հարևանությամբ գործող ձկնաբուծարաններ են: Ձկնաբուծարանից 300մ և ավել հեռավորության վրա բացակայում են բնակելի տները: Ձկնաբուծարանի համար ընդլայնվող տարածքն իրենից ներկայացնում է հարթ ուղիղ տարածք: Տրանսպորտային պայմանները՝ դեպի ելք Երևան-Մեղրի մայրուղի նպաստվում են տարածքի երկու կողմից առկա ճանապարհներով:



Ընկերության Մարմարաշեն, Երևան-Մեղրի մայրուղի 14/1 և 14/2 հասցեներում առկա շենք-շինությունների մակերեսները հետևյալն են՝ վարչական շենք – 162.6քմ, մանրաձկան արտադրամաս – 339.1քմ, մանրաձկան արտադրամաս և ծածկ – 490.8 քմ, ջրավազան – 2158.1քմ, ջրավազան – 14112քմ, ջրավազան 3662.8 քմ, ծածկ – 9քմ, պարիսպ – 96.2քմ:

Ընկերությունը փակ շինության մեջ ունի մանրաձկան տնտեսություն, որտեղ իրականացվում և ապահովվում է ամբողջական կենսական ցիկլ /մայրական վտառի կազմավորում և շարունակական ապահովումը, զարգացումը, սելեկցիան, ինկուբացիան, թրթուրի և մանրաձկան աճեցումը և կենսունակ մանրաձկան տեղափոխումը լճակներ/: Մանրաձկից մինչև ապրանքային ձկան աճեցման ցիկլը տևում է մոտ 1 տարի: Իշխան ձկան հաշվարկով մեկ ձկան համար մինչև 1կգ աճեցնելու համար կպահանջվի 1.8 կգ կեր, իսկ ստերիլտի հաշվարկով՝ 3.2 կգ: Ընդլայնման արդյունքում Ընկերության տարեկան արտադրողականությունը կհասնի տարեկան 515 տ իշխան և 350տ ստերիլտ: Անհրաժեշտ կերը ինչպես ներկայում, այնպես էլ ընդլայնման համար մատակարարվում է Եղվարդի կերերի գործարանից և պահեստավորվում պահեստային տնտեսությունում, որտեղից չափաբաժիններով տրվում է լճակներ: Լճակների վրա տեղադրված են աէրատորներ՝ անհրաժեշտ թթվածնով ջուրը հագեցնելու համար:

Նախատեսվող 48 լճակները մոտ 10 մ լայնքով և տարբեր երկարություն ունեցող ավազաններ են, որոնց բարձրությունը կազմում է 100 սմ, իսկ պատերի հաստությունը՝ 45 սմ: Ավազանների պատերը նախատեսված են տուֆ քարից:

Ձկնաբուծարանի տեխնիկատնտեսական ցուցանիշներն են.

- Ընկերությանը պատկանող ընդհանուր արտադրական տարածքի/ձկնաբուծարանի մակերես՝ 57925 քմ (3հա+2.7925հա);
- Գործող ձկնաբուծական ավազաններ՝ 40206.4քմ;
- Շենք, շինություններ՝ 1097.7 քմ;
- Նախատեսվող ընդլայնման ցուցանիշներ
- Ընդլայնվող հատվածի հողամասի ընդհանուր մակերես՝ 27925 քմ;
- Նախատեսվող լճակների մակերեսը՝ **16676** քմ;
- Նախատեսվող կանաչապատման մակերես՝ 3720 քմ;
- Անցումներ – 7528 քմ:

Նախատեսվող շինարարական աշխատանքների ավարտից հետո տարածքը պետք է բարեկարգվի և կանաչապատվի: Հողամասի նպատակային նշանակությունը կամ հողատեսքը՝ արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների, արդյունաբերական օբյեկտների են /վկ. 14092022-033-0044, ծածկագիր՝ 03-058-0231-0015/: Գրանցված իրավունքի տեսակը՝ անհատույց օգտագործման:

Ավազաններ ջրամատակարարումը՝ առավելագույնը 20426 հազ.լիտ/տարեկան ծախսով իրականացվելու է համաձայն N0007-21, 1-2-Ջ/Կ –Ս-Ե ջրօգտագործման թույլտվության 6 գործող խորքային հորերից: Օգտագործվող ջրաքանակի ավելացում ընդլայնվող արտադրության համար չի նախատեսվում, քանի որ գոյություն ունեցող լճակներում օգտագործվող ջուրը շրջանառվելու է նաև ընդլայնման համար նախատեսվող լճակներում, որից հետո համաձայն ջրօգտագործման թույլտվության հեռացվում է Հրազդան գետ:

Հայտում գնահատվել է շինարարական աշխատանքների հնարավոր ազդեցության շրջանակները և ներյայացվել են ազդեցությունների նվազեցմանն ուղղված միջոցառումներ: Ներկայացվող գործունեության իրականացման ժամանակ շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հիմնականում կապված են՝ փորման բեռնման աշխատանքների, հողային զանգվածների տեղափոխման, շինարարական տեխնիկայի



շահագործման, - ջրամեկուսացման համար օգտագործվող նյութերի օգտագործման և բետոնային աշխատանքների հետ: Ներկայացվող աշխատանքների կատարման ընթացքում հիմնական ռիսկերը կապված են փոշու արտանետումների հետ /որոնք կարող են առաջանալ գոյություն ունեցող շինությունների հիմքերի քանդման և հիմքերի փորման հետ/ և վառելիքի արտանետումներ շինարարական տեխնիկայի շահագործման ժամանակ (CO, NOx):

- Օդային ավազանը աղտոտումից պահպանելու համար նախատեսված են՝
- շինարարական աշխատանքների /փոշեգոյացնող աշխատանքներ/ ընթացքում իրականացնել ջրցան,
 - պարբերաբար ստուգել շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակը և իրականացնել կարգավորում:
 - շինարարական նյութերի (հատկապես սորուն շինարարական նյութերի /ավազ, խիճ, հող և այլն) տեղափոխել փակ ծածկով մեքենաներով.
 - սորուն նյութերի պահեստները ծածկել համապատասխան բարձրությամբ թաղանթով, ինչը կանխարգելում է փոշու տարածումը:

Շինարարական աշխատանքների տևողությունը կկազմի 15 ամիս: Նախատեսվող գործունեությունը ենթադրում հողային աշխատանքների իրականացում: Ե/բ հիմքերի տեղադրման համար կատարվելու է մոտ 17 000 խմ ընդհանուր ծավալով հողային զանգվածի հանույթ: Հանվող հողային զանգվածի մի մասը /4600 խմ ծավալով/ կօգտագործվի որպես հետլիցք և տարածքի հարթեցման համար, իսկ մնացած մասը կտեղափոխվի շինարարության թույլտվությամբ սահմանված վայր՝ Մարմարաշեն համայնքապետարանի հետ համաձայնեցված:

Հողային աշխատանքների կատարման ընթացքում հանվող հողի բերրի շերտի պահպանման համար նախատեսված է միջոցառումներ: Այն անմիջապես դարսվում է համապատասխան բարձրությամբ լայնակույտերով՝ թեքությունների վրա հիդրոտեղանակներով կատարելով ցանքս՝ նպատակով ունենալով կանխելու հողատարման գործընթացները: Պահեստավորված բերրի շերտը ձկնաբուծարանի լուծարումից հետո կօգտագործվի տարածքի ռեկուլտիվացիայի նպատակով:

Շինարարության նյութատեխնիկական մատակարարումը նախատեսվում է շինարարական ձեռնարկություններից, կամ գլխավոր կապալառու կազմակերպության արտադրական բազայից: Շինարարական նյութերից օգտագործվելու է ցեմենտ, մետաղական ամրաններ եւ այլ կոնստրուկցիաներ, փայտ, սրբատաշ եւ կոպտատաշ քարե շար, երեսպատման նյութեր և այլն: Շաղախը և բետոնը կառաքվեն անմիջապես շինհրապարակ՝ մոտակա բետոնաշաղախային հանգույցներից մասնագիտացված տրանսպորտային միջոցներով: Առաքումը ծրագրվում է այնպիսի պարբերականությամբ, որ ապահովվի աշխատանքների անընդհատությունը: Հարդարման նյութերը կարող են առաքվել ինչպես անմիջապես շինհրապարակ, այնպես էլ շինարարական կազմակերպության բազա՝ հետագա առաքման նպատակով: Տարածքում քայուղեր և վառելանյութ չի պահեստավորվելու: Փոխադրամիջոցների և շինարարական մեքենաների տեխնիկական սպասարկումը և լիցքավորումը իրականացվելու է շինհրապարակից դուրս մասնագիտացված կետերում:

Բնառեսուրսներից օգտագործվելու է միայն ջուր՝ աշխատանքային հարթակի ջրցանի, հանված գրունտի եւ ստացվող ավազի ու խճի խոնավացման, ինչպես նաեւ շինարարական անձնակազմի խմելու եւ կենցաղային նպատակների համար: Շինարարության փուլում տեխնիկական ջուրը կբերվի պայմանագրային հիմունքներով ավտոցիստեռներով: Շինարարության փուլում աշխատողների կոմունալ կենցաղային պայմանները կապահովեն տեղադրելով բիոզուգարաններ, խմելու ջուրը



կմատակարարվի տարաներով: Տարածքում գազաֆիկացում չի նախատեսվում, ջեռուցման համար կօգտագործվեն էլեկտրական սարքեր:

Շինանձնակազմի կենցաղային և տնտեսական ջրածախսը կկազմի 86 խմ/շին. ժամ: Ջրցանի համար օգտագործվող ջրի ծախսը՝ 337.5 խմ/շին. ժամ: Ընկերությունը չի հանդիսանում «Վեոլիա Ջուր» ՓԲ ընկերության բաժանորդ, խմելու ջուրը մատակարարվում է պայմանագրային հիմունքներով: Տարածքի տնտեսակենցաղային ջրերը հավաքվում է սեպտիկ հորում և ըստ անհրաժեշտության սահմանված կարգով հեռացվում են կոյուղու դիտահոր:

Շինարարության ընթացքում շինարարական հոսքաջրերի հեռացման համար շինարարական հրապարակին կից նախատեսված է անձրևաջրերի նստեցման պարզարան /որն իրենից ներկայացնում է 25խմ ծավալով տարողություն/, որտեղ մեխանիկական նստեցումից հետո պարզեցված ջուրը օգտագործել տարածքի ջրցանման համար, իսկ նստվածքը հեռացնել որպես շինադր:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքի մաքրում աղբից: Շինարարական աղբը և մնացած թափոնները տեղափոխվելու են տեղական մարմինների կողմից հատկացված աղբավայրեր:

Շինարարական աշխատանքների ընթացքում, առաջացող թափոնատեսակներն են՝ կենցաղային աղբը /ծածակագիրը՝ 9120040001004/՝ 0.7 տ, որը կհավաքվի աղբահավաք կոնտեյներներում և կտեղափոխվի մոտակա աղբավայր և 20 խմ շինարարական աղբը /ծածակագիրը՝ 9120060101004/՝ ամբողջությամբ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո տարածքի 6000քմ մակերեսում տնկվելու է բերքատու ծառեր:

Շահագործման փուլում ձկնաբուծարանից ջրուրացված կերը և ձկների չվերամշակված արտաթորանքներն հեռացվելով շրջակա միջավայր կարող են սննդարար տարրերի լրացուցիչ աղբյուր հանդիսանալ: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ արտադրված ձկան ամեն տոննայի դիմաց շրջակա միջավայր է արտանետվում 132 կգ ազոտ և 25 կգ ֆոսֆոր: Թափոնների քանակը կախված է կերի բաղադրությունից, կերակրման ռեժիմից, կերի քանակից, կերի յուրացման չափից, ջրի ջերմաստիճանից: Կերաբախշման համար սահմանված համակարգերով հնարավոր կլինի առավելագույնի հասցնել կերային գործակիցը և նվազագույնի հասցնել թափոնների գոյացումը: Հայտին կից փաստաթղթերում ներկայացվել է ձկան կերերի փորձարկումների վերաբերյալ մասնագիտական եզրակացություն՝ համաձայն որի արդյունքների՝ Ընկերության կողմից օգտագործվող կերերի որակական ցուցանիշները համապատասխանել են սահմանված տեխնիկական պայմաններին և նորմերին:

Քանի որ գոյություն ունեցող ընդլայնման արդյունքում նախատեսվող լճակներում ջուրը շրջանառվելուց հետո հեռացվում է Հրազդան գետ, խառնման արդյունքում նույնպես ջրում պարունակվող օրգանական միացությունները:

Ըստ նախնական գնահատման, ապահովելով նշված միջոցառումների պատշաճ մակարդակով իրականացումը, կարելի է արտակարգ իրավիճակների և առողջապահական ռիսկը հասցնել նվազագույնի, իսկ առաջացման դեպքում արագ և արդյունավետ հակազդել դրանց:

Աղմուկի մակարդակը նվազեցնելու համար նախատեսվում է՝

- շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպել ցերեկային ժամերին,

- շինարարական աշխատանքներում ներգրավել ժամանակակից աղմուկի առաջացման ցածր ցուցանիշներ ունեցող տեխնիկական միջոցներ, ինչպես նաև որպես շահագործող տեխնիկական նորմալ վիճակում:



- պարբերաբար ստուգել և կարգադրել տեխնիկական միջոցների և ավտոտրանսպորտի շարժիչները,

- շինարարական տեխնիկական միջոցների ընտրության ժամանակ հատուկ ուշադրություն դարձնել դրանց աղմուկի մակարդակին:

Ձկնաբուծարանի շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն/մեղմացմանն ուղղված մշտադիտարկումներ, ուղղված՝ մթնոլորտային (փոշի, CO, NOx) արտանետումների որակական և քանակական չափումներին, հողերի աղտոտվածությանը, աղմուկի և թրթռումների չափումներին: Գործունեության իրականավման ընթացքում Բնապահպանական միջոցառումների համար նախատեսված ծախսերը ամբողջ շինարարության ընթացքում գնահատվել է 750000 ՀՀ դրամ:

Եզրափակիչ մաս: Նախատեսվող գործունեության Հայտի փորձաքննությունն իրականացվել է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի պահանջներով: Փորձաքննական գործընթացին մասնակցել են տեղական ինքնակառավարման մարմինները /Մասիս համայնք, Մարմարաշեն բնակավայր/ շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, արտակարգ իրավիճակների, առողջապահության, ԿԳՄՍ նախարարությունները, որոնց կողմից ներկայացված կարծիքները ևս հաշվի են առնվել փորձաքննության գործընթացում:

ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, փորձաքննության փուլում Հայտի վերաբերյալ Մարմարաշեն համայնքում անցկացված հանրային քննարկման ընթացքում գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության:

Ամփոփելով վերոնշյալը պետք է փաստել, որ շինարարական աշխատանքների ընթացքում շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունները /որոնք ներառում են՝ փոշու արտանետումներ, աղմուկի առաջացում, ճանապարհների բեռնվածություն և այլն/ կլինեն կարճաժամկետ և էականորեն կարող են մեղմացվել շինարարության փուլում նախատեսված բնապահպանական միջոցառումների և մոնիթորինգի իրականացման շնորհիվ:

Փորձաքննական պահանջներ

1. Գործունեությունն իրականացնելիս անհրաժեշտ է առաջնորդվել Ջրային օրենսգրքի 30-րդ հոդվածի պահանջներով՝ ապահովելով ջրօգտագործման թույլտվության պահանջներով նախատեսված սարքերի ու սարքավորումների տեղադրումը, ձկնաբուծական նպատակով ջրօգտագործումը և ջրահեռացումն իրականացնել շրջակա միջավայրի նախարարության կողմից տրամադրված N0007 ջրօգտագործման թույլտվության պայմաններին համապատասխան:

2. Արդյունավետ ջրօգտագործման նպատակով ներդնել ջրի փակ շրջանառու համակարգ, իսկ ջրօգտագործման փաստացի չափաքանակները հաշվառելու համար ջրառի բոլոր կետերում տեղադրել տվյալների առցանց փոխանցմամբ ջրահաշվիչ (ջրաչափիչ) սարքեր, որոնք կնքված կլինեն շրջակա միջավայրի նախարարության կողմից:

3. Հրազդան գետ թափվող կեղտաջրերում ապահովել վնասակար նյութերի թույլատրելի արտահոսքի տվյալները, որոնք սահմանված են Ջրօգտագործման թույլտվությամբ:

4. Հսկողություն սահմանել օգտագործվող արհեստական կղերի ռոսակական ցուցանիշների և բուժանյութերի նկատմամբ, պարբերաբար իրականացնել արհեստական



կերերի ստուգումներ և փորձարկումներ՝ ցուցանիշները սահմանված տեխնիկական պահանջներին և նորմերին համապատասխանեցնելու համար:

5. Մինչև գործունեության իրականացումը Մարմարաշեն համայնքի ղեկավարից ստանալ համապատասխան համաձայնեցումներ՝ բուսաշերտի ժամանակավոր պահեստավորման, շինարարական աղբի և թափոնների հեռացման վայրերի վերաբերյալ:

6. Հողի բերրի շերտի հանումը, պահպանումը և հետագա օգտագործումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ կառավարության 2017թ նոյեմբերի N1404 որոշման պահանջներին համապատասխան:

7. Շինարարության ընթացքում անհրաժեշտ է ապահովել ԲԿՊ-ում և բնապահպանական մոնիթորինգի պլանում առաջարկվող միջոցառումների և մոնիթորինգային դիտարկումների իրականացումը և ժամանակացույցերը, որոնց արդյունքները պետք է հասանելի լինեն պետական շահագրգիռ մարմիններին և հանրությանը:

ԵՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«ՄԵՐԻ ՖԻՇ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Արարատի մարզի Մարմարաշեն համայնքի Երևան-Մեղրի մայրուղի 14 հասցեում ձկնաբուծարանի վերակառուցման/ընդլայնման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն, վերը նշված պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխ. մասնագետ՝



Հ. Մկրտչյան